և ոչինչ բարոյական ներգործութիւն չունի Թիւրքիայի պէս մի փտած պետութեան վրա և սա յանդգնաբար կարող է Եւրոպային պատասխանել. «դուք ինքներդ էլ ճնշում էք ձեր հպատակ ազգութիւններին։»

Ինքն արևմուտքը կարօտ է կատարեալ վերանորոգութեան և բարոյական յեղափոխութեան, որպէս զի կարողանայ բարոյապէս ներգործել և արևելքի վրա։ Քանի որ Եւրոպան ինքն ճընշող, ազատութեան հալածող կը լինի, նա ոչինչ բարոյական ներգործութիւն չի ունենայ Թիւրքերի վրա, ոչինչ հեղինակութիւն չի ունենայ թէև յետադէմ, բարբարոս և անբարոյականացրած, բայց այնու ամենայնիւ բնածին խելք ու դատողութիւն ունեցող արևելցու վրա։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

Փետրվարի 27-ին

Անցեալ 20-ին «Օդեսսա» հիւրանոցում, յօգուտ սովելոց մի պարահանդէս եղաւ։ Ամբողջ հիւրանոցը լի էր բազմութեամբ։ Բոլոր տոմսակները ծախվելուց զկնի շատերին առանց տոմսակի ընդունեցին և շատերն էլ զրկվեցան տեղ չը լինելու պատճառով։ Ինչպէս լսում ենք զուտ արդիւնքը մօտաւորապէս 400 ր. կը հասնի։

Անցեալ 25-ին քաղաքային խորհրդարանում 29 իրաւասունների ներկայութեամբ հին քաղաքագլուխը յանձնեց իր պաշտօնը նոր ընտրված քաղաքագլխին, և յոյս յայտնեց, որ նա լաւ պէտք է վարէ իրան ստանձնած պաշտօնը։

Մենք էլ մեր կողմից աւելացնում ենք՝ թէ պ. Յովհաննէսեան Մութաֆեանցը ազատ կը մնայ իր դէմ ուղղված բոլոր ինտրիգներից միայն իր խոհեմութեամբ, հեռատեսութեամբ և արդար կառավարութեամբ։

Անցեալ 1879 թուին մանկավարժական թերթի համար կէս տարվայ բաժանորդագինը հաւաքեցին 3-ական ր.։ Բայց մինչև այժմ ոչ մանկավարժական թերթի երես տեսանք և ոչ մեր տված փողերը յետ ստացանք։

Ամենայն գործ իրան հետևողներն ունի. այդ բնական է։ Անցեալ տարիները «Արարատեան» ընկերութեան անունով մի քանի անձինք փող հաւաքեցին և իրանց գրպաններում պահեցին։ Մի քանիսն էլ տեսնելով որ ձայն հանող, հաշիւ պահանջող չը կայ, իրանք ևս հանգանակութիւն արին և փողերը իրանց գրպաններում ամուր պահեցին, կարծելով որ իրանց կը մնայ։ Բայց եթէ այդ պարոնները, մի քանի օրից փողերը չուղարկեցին ուր հարկն է, այն ատենը ստիպված կը լինեմ նրանց անունները հրապարակ հանելու։

Թեմական վերատեսուչ պ. Գ. Բարխուդարեանցը անցեալ տարվայ օրինաւոր և ապօրինի կարգադրութիւններից զոհ մնալով այս օրերս ևս շնորհիւ Ախալցխայի առաջնորդին մի անապատելի գործ չմնաց, այն է, դեռ մի տարվայ դասատուութեան շրջանը չը լրացած մի նորեկ ուսուցչի դասերը ձեռքից խլեց։ Զարմանալի է, որ կամայականութեան և կամապաշտութեան զոհ եղած, իրանց պաշտօնին անյարմար մարդիկ երկար ժամանակ մնում են իրանց պաշտօններում։ Այսպիսի մարդկանց վրա արդեօք խղճմտանքը չունի որ և է ազդեցութիւն, որ ազգային ուսումնարանները չը զոհեն իրանց շահերին։ Մեր ուսումնարանների վիճակը օրից օր վատանում է։

* * *

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՑԻՑ

—

Փետրվարի 22-ին

Ամսիս 1-ին բացվեցաւ Մոսկվայում առաջին ուսանողական համակեցութիւնը, որի հիմնադիրն է պատուաւոր քաղաքացի պ. Լեպեշկինը։ Պատուական տուն չքեղ զարդարած սենեակներով պատրաստ է ընդունելու իր ծածկոյթի տակ մօտ 50 աղքատ ուսանողներ։ Բացի ամենայն տեսակ յարմարութիւններից, որոնցով չէ մոռացել պատուարժան նուիրատուն շրջապատելու իր մշտական հիւրերի բնակարանը, վերջինները կը ստանան նրանից նոյնպէս մաքուր ճաշ և թէյ։ Բնակարանը ունի ընդհանուր սեղանատուն, ծիսասենեակ, գրադարան և մի առանձին սենեակ բժիշկ ուսանողների քիմիական պարապմունքների համար։

Ով եղել է ուսանող և եղել է աղքատ ուսանող, ով ապրել է նրա անշուք, կիսամերկ և կիսակուշտ կեանքով, նա միայն կարող է արժանապէս գնահատել այդ օրինակելի և բարձր բարերարութիւնը։ Յարգելի նուիրատուի անունը միշտ անմոռանալի կը մնայ ամեն մի ուսանողի սրտում։

Այս հանդամանքը առիթ է տալիս ինձ աւելացնելու մի քանի խօսք։

Շատ ժամանակ չէ, որ մեր պարբերական մամուլը ուղղեց դէպի հայ-ուսանողութիւնը մեղադրական ճառերի մի ամբողջ շարք։ Ինչեր չեն գրել, ինչ պահանջներ չեն բարձել ուսանողների վրայ! Մէկը պահանջում է, որ ուսանողները տակնուվրա անեն եւրոպական քաղաքականութիւնը և անգութ դիպլոմատիային մարդասիրական զգացմունքներ քարոզեն, միւսը ծիծաղում է ուսանողների վրա, որ նրանք պարապած լինելով իրանց ներքին կեանքին վերաբերեալ գործերով, ամուշադիր են թողնում ազգի վիճակը, երրորդը բարկութեան շանթեր է թափում ուսանողների վրա, որ նրանք իրանց ծակ գրպաններով ու դարդակ փորով չեն հիմնում հայկական օրգաններ... Ես այդ կուրիոզների վրա կանդնելու միտք չունեմ։ Կասեմ միայն այն, որ մամուլը հասարակութեան ձայն է։ Դա անբաւական է ուսանողութիւնից, անբաւական է ուրեմն և հասարակութիւնը։ Բայց թող ներում մեզ հարցնել, ինչ է արել այդ հասարակութիւնը ուսանողութեան համար, որ այդպէս խիստ պահանջող է հանդիսանում դէպի նա։ Հետաքրքրվել է նա արդեօք երբ և իցէ իմանալու ուսանողների դրութիւնը, հասկանալու նրանց պէտքերն ու պահանջները։ Մտածել է նա արդեօք գոնէ մի անգամ իր սեփական ինիցիատիւով օգնութեան ձեռք հասցնելու օտար երկրում աղքատութեան մէջ տանջվող ուսանողութեան վրա։ Բազմաթիւ երիտասարդներ ամենայն տարի լցնում են Ռուսաստանի և մանաւանդ մայրաքաղաքների համալսարանները և ուրիշ բարձրագոյն դպրոցները։ Ի՞նչպէս են զլուխ տանում նրանք, ինչպէս են «եօլա» գընում,—տուել է իրան այդ հարցերը երբ և իցէ բազմապահանջ հայ-հասարակութիւնը։ Կուշտ փորով նստել և քարոզներ կարդալ ի հարկէ հեշտ բան է։ Եկէք, տեսէք, կամ հարցրէք ու իմացէք ուսանողների դրութիւնը, նրանց պահանջները և յետոյ ասպարէզ դուրս եկէք ձեր պահանջներով։ Եթէ ուսանողը լռում է և ձեր զանչան չէ տանում մուրացկանի պէս իր կեանքի նկարագիրներով, այդ չէ նշանակում թէ նա երջանկութեան ու բարօրութեան մէջ է գտնվում։ Ապահովէք նրա դրութիւնը նիւթական կողմից, միջոց տուէք նրան չը վատնելու իր մատաղ թարմ ոյժերը ապրուստ ճարելու օրհասական կռուում,—այն ժամանակը ձեր պահանջները արդար կը լինեն։ Դուրս եկէք, հարուստ հայեր!... Լեպեշկինի օրինակը ձեր առաջն է դրած...

Որքան էլ անուշադիր ու անտարբեր է հասարակութիւնը դէպի ուսանողական պէտքերը, հայ ուսանողը չէ դադարում սիրել իր ազգը։ Ցաճկասանցի հայի սրտամաշ հառաչանքները դուցէ ոչ մի տեղ այնքան արձագանք չը գըտնեն, որքան ուսանողի վառ և կենդանի սրտում։ Զարաչար կը սխալվէք եթէ կարծէք, որ այդ սէրն ու համակրութիւնը լոկ պլատոնական են։ Ուսանողութիւնը գործում է որքան կարող է և որքան հնար է։ Նա գրում է, թարգմանում է, զօհաբերութիւններ է ժողովում, հաւաքվում է, խօսում է, մտածում է։ Դրանից աւելի նա անկարող է անել։ Ուսանողը հասկանում է, որ գործելու համար պէտք է մտաւոր պատրաստութիւն ունենալ։ Եւ նա կամենում էր պատրաստվել։ Դա կամենում էր ուսումնասիրել պատրաստվելու միջոցներից մէկը՝—մայրենի գրականութիւնը, բայց նրան չը տուին այդ միջոցը։ Զէք հաւատում։ Լսեցէք։

Այս ամառ ուսանողութեան կողմից ես մի խնդիր էի ուղղել դէպի մեր հեղինակները։ Ես խնդրում էի նրանցից չը խնայել իրանց աշխատութիւններից մի մի օրինակ ուղարկելու ուսանողութեանը։ Ես համոզված էի որ ուսանողի մի այդպիսի համեստ խնդիրը արձագանք կը գտնի մեր հեղինակների մէջ, այն հեղինակների, որոնք իրանց գրուածքներում այնքան սէր և համակրութիւն յայտնում դէպի ուսանողութիւնը... Բայց դուրս եկաւ, որ իմ յոյսերս ոչ այլ ինչ էին, եթէ ոչ օպտիմիստական ցնորքներ... Ոչ մի հեղինակ, ոչ մի թարգմանիչ արժան չը համարեցին իրանց փառքի բարձրութիւնից ուշադրութիւն դարձնելու ուսանողի խօսքի վրա։ Մի ոչ—հեղինակ միայն, պ. Յովհ. Բաբաեանցը համակրութիւն յայտնեց, ուղարկելով Ալէքսանդրապօլից 10 հատոր գիրք ուսանողական գրադարանի համար։ Շնորհակալութիւն մեծապատիւ պարոնին։

Այդ զարմանալի սառնութիւնը ու անտարբերութիւնը մեր հեղինակների կողմից կարելի է բացատրել երկու կերպ։ Կամ հայ մարդը առհասարակ սովորութիւն չունի ուշադրութիւն դարձնելու և մանաւանդ կատարելու լրագրի միջոցով արած առաջարկութիւնները (օրինակները անհամար են), կամ թէ մեր հեղինակների խօսքի ու գործի մէջ ահագին անդունդ կայ։ Երևի շատ հեշտ է թղթի միջոցով մարդասիրութեան և փոխադարձ օգնութեան սկզբունքները քարոզել, ազնիւ, բարոյական համոզմունքներ արծարծել...

Հաւատանք դրանց։ Ինչ ողորմելի համոզմունքներ են, որոնք հէնց առաջին անգամ իրականութեան հետ հանդիպելիս ջարդվում են, փըշրվում, անհետանում...

Ի՞նչ է դուրս գալիս այստեղից։

Հայ հասարակութիւնը չէ մտածում տալ ուսանողութեանը նիւթական օգնութիւն, հայ հեղինակները մերժում են տալ մտաւոր օգնութիւն, իսկ նրանք երկուսն էլ պահանջում են ուսանողութիւնից ազգի ցաւերին օգնութիւն... Արդարացի է այդ... Պատասխանեցէք....

Ս. Դաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մի հալաբարցի պարոն գրում է մեզ հետևեալը։ «Մարտի 1-ին կատարվեցաւ մի օրիորդի յուղարկաւորութիւնը։ Օրիորդը նախ սովորելիս է եղել Հալաբարի Ս. Մարիամեան ուսումնարանում և այս երկրորդ տարին է, որ Գայեանեան ուսումնարանումն էր։ Հանգուցեալ օրիորդի հայր, պ. Եազօր Եղիազարեանց, իր աղջկայ յիշատակը անմոռաց պահելու համար նուիրեց երկու տակոսաբեր տոմսակներ՝ մինը Ս. Գայեանեան դպրոցին, միւսը Կ. Պոլսի «Միացեալ ընկերութեանը»։ Երկրորդ կտակի դէմ մենք ոչինչ ասելու չունենք։ Բայց առաջինի մասին կասենք որ հացը պէտք է տալ քաղցածին և ոչ թէ կուշտին։ Գայեանեան ուսումնարանը առանց այդ էլ ապահովված է. չենք հասկանում Հալաբարի Մարիամեան ուսումնարանի մասին ով պէտք է մտածի։ Զը մոռանանք որ Հալաբարը Թիֆլիսի մի բաղմամարդ հայոց թաղ է, որտեղ դեռ մինչև այժմ չը կան հաստատ կազմակերպութեամբ դպրոցներ։»

—

Մեզ գրում են, որ Ս. Գայեանեան դրպրոցը, որ նիւթական կողմից այն աստիճան ապահովված է այժմ, որ իր միջոցներից դրամական նպաստ է նշանակել մի այլ դպրոցին, ինքն կարծես կարողութիւն չունի իր բոլոր դասատները տաքացնելու։ Վարժապետները վերարկուն հագած մտնում են դասատները և այդպէս են դասեր տալիս։ Ինչ պէտք է անեն խեղճ օրիորդները։ Նորերումս դպրոցի բարձր դասատան մի օրիորդ մրսել է չը տաքացած դասատան մէջ և հիւանդացել է։

—

Մեզ գրում են Ղազախից (Շիրակի սահմաններից), որ Ցրտնկինու տեղ նշանակված Ղարսի նոր նահանգապետ դեներալ Գրոսման, մտաւ արդէն իր պաշտօնի մէջ և անցաւ այդ նահանգի մի քանի գիւղերի միջով, որտեղ բնակիչները ամեն տեղ ուրախութեամբ նրան հանդիպում և ողջունում էին։

—

ԼԷՆԿՕՐԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ տեղական վարչութիւնը ուշադրութիւն չէ դարձնում քաղաքի փողոցների անտանելի անմաքրութեան վրա։ Փողոցները շատ դիւրութեամբ կարելի էր մաքուր պահել, ասում է թղթակիցը, աչքի առաջն ունենալով քաղաքի չորս կողմը եղած ազատ առատութիւնը։ Բայց թղթակցի ասածին նայելով Լէնկօրանի մի փողոց միայն, որտեղ երթևեկութիւն ունեն և զբօսնում են վարչութեան ներկայացուցիչները, քիչ թէ շատ մաքուր է պահվում։ Լուսաւորութիւն բոլորովին չը կայ փողոցներում և եթէ իւրաքանչիւր խանութպատէր իր դրան վրա կամ խանութի առջև չը դընէր իր հաշուով մի լապտեր, անհնարին կը լիներ անցնել փողոցներում հրեկոյեան ժամանակ։

—

ԹԷԼԱՒԻՑ մեզ գրում են։ «Փետրվարի 23-ին Թէլաւի սբ. Գէորգ Զվէլգալավանի եկեղեցու սենեակում խեղդվեցաւ մի 20 տարեկան երիտասարդ։ Միւս օրը, առանց մարմինը գտնելու թաղեցին նրան։ Արդեօք անձնասպանութիւն էր դա, թէ ուրիշներն են խեղդել նրան,—անյայտ մնաց։»

—

Մեզ գրում են Թէլաւից և հետևեալը։ «Տեղիս գործակալը և տէր Աբել Սուքիասեանց օրերումս եօթ հայաստանցի հայ թշուառներին բաժանեցին իրանց հաւաքած շորերից, տալով իւրաքանչիւրին մի շապկի, վարտիք, կրկնավարտիք, արխալուխ և չոխա։ Նմանապէս մի մի ձեռք շոր մանր երեխաների համար։ Ամեն մինին ինն կտոր։ Ընդամենը բաժանեցին 63 կտոր։ Այդ մերկ և նիհար գաղթականները քուրդերի ձեռքով հարստահարվածներից են։ Մի կտոր հացի համար ամենի առաջ խոնարհեցնում էին իրանց գլուխը, ամենքի ոտները պատրաստ էին լիզել։ Նրանք կորցրել էին մարդկային պատասխանատուութեան և ինքնասիրութեան զգացմունքի վերջին նշոյլը։ Ցաւալի էր նրանց վրա նայել։ Խղճերը մնացին այստեղ մի շաբաթի չափ և յայտնեցին որ գնալու են շինվող Բագու-Թիֆլիսեան երկաթղու գծի վրա մշակութիւն անելու։» Թղթակիցը վերջացնում է իր նամակը բանաստեղծի խօսքերով։ «Ափսոս քեզ հայոց խղճիկ ժողովուրդ, ցիրուցան եղար անմեղ, անխորհուրդ։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Այստեղ թղթախաղը օրից օր աւելի և աւելի է տարածվում հասարակութեան մէջ։ Կանայք և օրիորդներ, մինչև անգամ, վաղ առաւօտից իրանց տան տնտեսութիւնը թողած, նստում են թուղթ խաղալու և այսպիսով անցնում են ամբողջ օրը։ Մտաւոր զարդացման համար ժամանակ չը կայ։ Ամբողջ քաղաքը, աղաներից սկսած մինչև ծառաները՝ բոլորն էլ թուղթ են խաղում ամբողջ օրերը։»

—

Շնորհակալութեամբ ստացանք այս օրերս Թիֆլիսում տպված մի փոքրիկ հայերէն բրոշիւր «Դիւցազունք ըստ Խորենացւոյ. Հայկ, Արամ, Վահագն, պատկերներ պատմական կեանքից»։ Գրքոյկը ստորագրված է չորս տառով Ա. Մ. Ե. Պ. Տպված է Մովսէս Վարդանեանի և ընկ. տպարանում։

—

Այս օրերս պ. Դ. Պ. Պուրցէլաձէ հրատարակեց ռուսերէն լեզուով իր հետազօտութիւնը վրաց եկեղեցական հրովարտակների մասին։ Այդ գիրքը պէտք է ծառայի որպէս նիւթ մեզ մօտ լինելու հնագիտական ժողովին։ Գրքի վերնագիրն այս է. Грузинскіе церковные гуджари (грамоты). Գրքի գինը 1 բուբլ է և տպված է Գլխաւոր Կառավարութեան տպարանում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Վիէննայից լրագիրներին գրում են հետևեալը։ Այս օրերս կրկին լուրեր տարածվեցան այստեղ, որ դիտաւորութիւն կայ Բոսնիան և Հերցեգովինան վերջնականապէս միացնել Հաբսբուրգների կայսերութեանը։ Տեղական մի կիսապաշտօնական լրագիր իր առաջնորդող յօդուածի մէջ պարծենում էր,